

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՎԻՐՎՈՒՄ ՆԱՐԵԿԻ ԳՐՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ

ՔՆԱՐԻԿ ՏԵՂԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԶՐՈՒՅԱՊԱՏՈՒՄ ՎԱՐՁԻ ԱՂԲՅՈՒՆԵՐԻՑ

Գրիգոր^{*} Նարեկացու գրական ժառանգությունը, վարքը և նրա մասին հյուսված ավանդությունները վաղուց արդեն զտնվում են հայագետների ուշադրության կենտրոնում: Գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, այդ թվում՝ ուշագրավ հետազոտություններ՝ նվիրված նրա վարքին և գրուցներին: Հատկապես մեծ ավանդ ունի այդ գործում հմտու նարեկացիագետ, երջանկահիշատակ Պողոս Խաչատրյանը: Նարեկացու վարքի և ավանդությունների մասնակիությունը համակողմանի քննությունը նրան հանգեցրեց այն եզրակացության, որ Նարեկացու մասին ավանդությունները ժողովրդական և վաճական բանահյուսության արտահայտություններ են¹: Հատ նույն հեղինակի՝ արդեն 13-րդ դարում գրված է եղել «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն» 18 միավոր պարունակող գրուցների շարքը²:

Պողոս Խաչատրյանից առաջ՝ 1969 թ. լուս տեսած «Ավանդապատումում» Արամ Ղանձանան առանձին բաժնով ներկայացրեց եկամուտ գրուցները՝ նրանում ընդգրկելով Հին և Նոր Կոտակարանների համապատասխան նյութը: Միաժամանակ նա նշեց, որ շատ գրուցների աղբյուրներն անհայտ են³:

Մենք նույնական անդրադարձել ենք Նարեկացու վարքին և նրան նվիրված ավանդություններին⁴ ու մատնանշել ուսումնասիրողների ուշադրությունից վրիփած ավանդաշարի այլ աղբյուրները: Պարզվում է, որ Գրիգոր Նարեկացուն նվիրված գրուցների համար, բացի Աստվածաշնչի կանոնական գրքերից, աղբյուր են ծառայել նաև Հիսուսի Տղայու-

* Որպես գնկուցում կարդացվել է դեկտեմբերի 27-ին Ս. Էջմիածնում Նարեկի 1000-ամյակին նվիրված զիտաժողովում:

¹ Տե՛ս Խաչատրյան Պ., Գրիգոր Նարեկացին և նայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 204:

² Տե՛ս նշվ. աշխ., էջ 184:

³ Տե՛ս Ղանձանան Ա., Ավանդապատում, Երևան, 1969. Առաջարան, էջ ԾԶԳ-ԾՂ:

⁴ Տե՛ս «Քնարիկ Տեր-Դավթյան, Թովմայի Ավետարանի հետքերը հայ միջնադարյան գրուցներում», «Էջմիածին», 1998, Դ, էջ 109. նույնի՝ Հիսուսի Տղայության ավետարանների արտացոլը հայ միջնադարյան գրականության մեջ՝ Հայաստանը և բրիստոնյա Արևելքը գրքում, Երևան, 2000, էջ 333 և նշ.:

թյան պատմությանը նվիրված պարականոն ավելուարանները: Ներկա հոդվածում կցանկանայինք այդ մասին խոսել ավելի հանգամանալից, հատկապես հայերեն թարգմանությամբ մեզ հասած Նախավետարանի մասին:

Հայտնի է, որ Եկեղեցին, դարեր շարունակ պայքար մղելով տարբեր աղանդավորական շարժումների դեմ, անխնա ոչնչացրել է նաև նրանց գաղափարախոսությունն արտահայտող գրականությունը, այդ թվում և՝ պարականութների մեջ մասը: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ այդ գրականությունը, մասնավորապես պարականոն երկերը, հայ հասարակության որոշ շրջաններում գործածության մեջ են եղել և, անշուշտ, պետք է որ ազդեցություն թողած լինեին հայ միջնադարյան գրականության վրա: Դա հատկապես վերաբերում էր ժողովրդական ակունքներ ունեցող, լայն գանգվածների ճաշակին և պատկերացումներին հարազատ վիպական արձակին, զրուցատիպ գրականությանը:

Հայ պատմիչների (Սամվել Ս. Անեցի, Միխթար Այրիվանեցի) ցուցակներում հիշատակվում են երկու պարականութներ, որոնք 531 թվականից առաջ Հայաստան բերվեցին Անստորականների կողմից և թարգմանվեցին հայերեն՝ դա «Նախավետարան» կամ «Գիրք Տղայության Քրիստոսի» անվամբ հայտնի և Հակոբոս տեսառներորը վերագրող ավետարանն է, որը պահպանվել է հայերեն թարգմանությամբ, և Թովմայի Ավետարանը, որի լրիվ անվանումն է. «Խորայելացի փիլիսոփա Թովմայի Պատմություն Քրիստոսի մանկության մասին»: Այս վերջինը հայերեն ձեռագրերում չի պահպանվել կամ մինչ այժմ չի հայտնաբերվել⁵:

Ուսումնասիրողները պարզել են, որ Նախավետարանի հայերեն թարգմանությունը շատ է տարբերվում Արևմուտքում տարածված նույն ավետարանից և, ըստ երևույթին, սերում է արևելյան խմբագրություններից՝ արարականից կամ պարսկականից⁶: Նրա հիմքում ընկած է Մանկության Ավետարանի այն բնագիրը, որի խմբագիրը, ըստ Տիշենդորֆի և նրան համամիտ Գ. Զարբիանալյանի, հետևում է Հակոբի և Թովմայի անվամբ գտնված անհարազատ ու ավետարանի անունը կրող գրություններին, ապա և այն ավանդություններին, որ տարածված էին ասորիների, պարսիկների և եզրակացների մեջ: Տիշենդորֆը հիշյալ ավետարանի առաջացման ժամանակը դնում է «նախքան արաբացների օրենսգրքի ի հայտ գալը»⁷:

Հայերենում, ինչպես նկատում ենք «Գիրք Տղայության Հիսուսի» պարականոնը, իրոք, առնչվում է Թովմայի Ավետարանի հետ: Նախավետարանի 28 զլուխներից (առաջին խմբագրությունը⁸) առաջին 15-ը նվիրված են Մարիամի ծննդյան և մանկության, ապա նաև Հիսուսի ծննդյան պատմություններին (սա այն մասն է, որը բովանդակությամբ համապա-

⁵ Տե՛ս Անապան Հ., Հայկական մատնագիտություն, Բ. Ա., Երևան, 1959, էջ XXIX-XXIII, նաև՝ Բ. Բ., Երևան, 1976, էջ 948-949:

⁶ Տե՛ս Զարբիանալյան Գ., Մատնադարան հայկական թարգմանութեամց, Վեճետիկ, 1883, էջ 192; Mapp H., Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей /Отд. Оттиск из «Записок Вост. Отд. Импер. Рус. Археол. Общества», т. 5, с. 2.

⁷ Տե՛ս Զարբիանալյան Գ., նույն տեղում, էջ 194:

⁸ Տե՛ս Թամազարան հայկական հիմն և նոր դպրութեամց. գիրք Բ.-Ամկանոն գիրք Նոր Կտակարանաց. Հրտ. Եսայի Տալեցի: Վեճետիկ, 1898, էջ 1-126:

տասխանում է Արևմուտքում տարածված Նախավետարանի ընդարձակ հումարեն բնագիտական հակ 16-րդ զինից ակավող մասը նվիրված է Հիսուսի մանկությանը մինչև 18 տարեկան հասակը: Եվ այս մասում համուկապում են մի շարք զրուցներ, առնվազն 5-6, որոնց զուգահեռները կան նաև մովկմայի Ավետարանում:

Նախավետարանն այլ պարականությունից մեջ որոշակ տեղ է գրավում: Հակառակ ըրան, որ «Գիրք տղայությանը» չի անցել կանոնիկ ավետարանների շարքը, այն Եկեղեցու կողմից չի մերժվել և դարերի ընթացքում Մարիամ Աստվածածնի, Քրիստոսի ծննդյան զրուցները մեծ տարածում են գտել ինչպես Եկեղեցու շրջանակներում, այնպես էլ Օքանից դուռ Անդշնչանքի առյուղ հանդիսանալով գրողների, Ակարիչների, Երգահանների համար: Մեզ են հասել Մատենադարանում և Սփյուռքի գրադարաններում պահվող այդ երկի 30-ից ավելի ձեռագրեր:

Մեծ հավաճականությամբ կարելի է պնդել, որ Նախավետարանի հետ ծանոյթ է եղել նաև «Վարք և պատմություն» գրվածքի կազմողը: Այստեղ պետք է կրկին անդրադասներ Պողոս Խաչատրյանի արդարացի կարծիքին, որ «Վարք և պատմությունը» մի ամբողջական գեղարվեստական ստեղծագործություն է⁹: Եվ ավելացնենք, որ այդ երկի հետո ինչնին ամբողջությամբ հետևել է Նախավետարանի կառուցվածքին: «Վարք»-ում, ինչպես և Նախավետարանում, Գրիգոր Նարեկացու պատմությունը սկսվում է վաղ մանկության շրջանում կատարված հրաշագործություններով և ավարտվում մրա գերեզմանի երկու հրաշագործություններով: Ծիշու է, Հիսուսի պատմությունը հասցված է մինչև 18 տարեկան հասակը: Հիսուսի և Նարեկացու հրաշագործությունները հիմնականում ընդգրկում են 7-12 տարեկանի ժամանակահատվածը: Երկուսում էլ բոլոր հրաշագործությունները համարակալված են, ունեն ի նեց վերնագրերը («Վարքում»՝ ոչ բոլորը), ժամանակագրություններ նաշշորդում են միմյանց: Թե՛ մեկում, թե՛ մյուսում Հիսուսը և Նարեկացին հրաշքները գործում են տեղից տեղ փոխադրվելով: Տղայության ավետարանի գրումները փաստագրում են այդ թափառումների վայրերը՝ նազարեթից՝ աստիճանի երկիրը «Վասն փոխելոյ անտի և գնալոյ լերկիրն Ասորոց», Ասորիքից՝ «վերկիրն Քանանու, Խարայելի, ի քաղաքն Տապարիա» և այլն: Ծառ ուշագրավ է, որ երկուսում էլ զրուցն ավարտվում է հրաշագործի անհետանալով և փախուստով, իսկ երբեմն՝ կերպարանափոխությամբ (հմմտ. Տղայության ավետարան: «զայս ասացեալ թիսուսի, ել վաղվաղակի արտաքս և թագեալ ի նոցաւելէ», «եղել ի նոցաւել աներեւոյթ», «Վարք և պատմություն»: «Պարտ էր ոչ զիտել զգործս իմ»-ասում է Նարեկացին, - «Եւ ելեալ զաղտ զնաց», կամ «Պարտ էր, զի ոչ ոք զիտել զգործս իմ, այլ ոչ կարեն կալ ի տեղիս այս»): Ակնհայտ նմանություն կա Հիսուսի և Նարեկացու վարքագծերի մեջ: Բոլոր զրուցներում Նարեկացին, ինչպես Հիսուսը, Աներկայացված է որպես ժողովրդի մասին հոգ տանող մարդ: Նա հանդես է գալիս մե՛կ հոտսաղի, մե՛կ այգեպահի, մե՛կ երկրագործի, հասարակ ծառայի, ճամփորդի կերպարանքով, որը կենդանացնում է մտածին, անաստմին, տումը լիացնում է մթերքներով, ժայռից չուր բխեցնում և այլն: Բացի կառուցվածքից և Նարեկացու ընդհանուր Ակարագրությունից, որոշ ավանդությունների համար նույնական աղբյուր են ծառայել Նախավետարանի զրուցները: Այստեղ

⁹ Տե՛ս Խաչատրյան Պ., Աշվ. աշխ., էջ 180:

կցանկանայինք անդրադառնալ «Հիսուսը ներկարարի աշակերտ» ավանդությանը: Հայկական ավանդություններում, ինչպես ցուց է տվել Արամ Ղանալանյանը, այն հանդիպում է ավելի ուշ շրջանի գորոպումներով՝ Ծիրակի, Ղափանի, Զավախսի բարբառներով¹⁰: «Վարքում» և Պ. Խաչատրյանի կողմից թերված Գրիգոր Նարեկացու մասին այլ ավանդություններում այն բացակայում է: Սակայն կա մեկ ուրիշ զրուց՝ գիրի ծառի մասին, որի աղբյուրը, ըստ իս, Նախավետարանի «Հիսուսը ներկարարի աշակերտ» ավանդությունն է: Ավետարանում բարկացած ներկարարը, տեսմելով, որ Հիսուսը խառնել է բոլոր գումերը, նրա հետևից գցում է կոպիչը, որն ընկնելով գետին՝ անմիջապես կանաչում է¹¹: Գիրի ծառի մասին զրուցում 7 տարեկան հոտաղ Գրիգորը տնկում է զայրացած պառավի՝ իր հետևից շարտած անթրոցը, որը կանաչում է ու վիթխարի գիրի դառնում: Մեկ այլ ավանդությունում Զեկի զյուղի կենտրոնում բուսած կանաչ և փարթամ գիրին համարվում է հոտաղ Նարեկացու ճիպոտը: Նախավետարանի նույն զրուցի արձագանքն է Ստեփանու Հուսկան որդու վարքի (13-րդ դար) մի հրաշագործության պատմությունը: Մսավաճառը խնդրում է, որ Ստեփանոսն իր աղոթքներում հիշի նրա հորը, և, փորձելու համար սուրբին, իր հոր անվան փոխարեն տալիս է Կոճիկ անունը: Ստեփանոսի աղոթքով մահմեդական մսավաճառի մսի կոճիկն է կանաչում: Ասենք, որ Ստեփանոսի վարքի դեպքերը տեղի են ունենում նույն այն վայրերում, ինչ և Նարեկացու հրաշագործությունները՝ Արգելան վանքում, որը գտնվում էր Վանա լճի հյուսիսում:

Սարգիս Հարությունյանը մեծ աղերս է գտնում Գիրի ծառի ավանդության և Փոքր Միերի անվան հետ կապված մի զրուցի միջև: Փոքր Միերը գնում է Հալաբա քաղաք, դառնում տերտերի մշակ և նրա փոխարեն ինքն է գնում կոփվ՝ մի անթարոց (կրակխառնիչ) զած թէին¹²: Նոյն հետինակը մատնանշում է այն հատկանիշները, որոնք ապացուցում են պատանի Գրիգորի ժառանգական կապը ժողովրդական հերոսների հետ: Այդպիսիք են, ըստ նրա, Նարեկացու հրաշքներ գործելու բնական ձիրքը, ասել է՝ բնատուր աստվածային շնորհը, հրաշքների նպատակային միասնությունը, այսինքն՝ հասարակ ժողովրդին նեցուկ լինելու հանգամանքը, վիպական հերոսի թափառությունը¹³:

Ինչպես տեսանք, այդ նոյն հատկանիշներով է օժտված Տղայության ավետարանի Հիսուսը, իսկ առաջին կետի՝ աստվածային բնությամբ, ընդգծված ձևով՝ թուվմայի Ավետարանի Հիսուսը: Այդպիսի հմանության մեջ՝ մի կողմից պատանի Հիսուսի, մյուս կողմից՝ ժողովրդական հերոսների, ոչ մի արտառող բան չկա, քանի որ վանական բանահյուսությունը և ժողովրդական փոխկապացված են զարգացել, միայն թե այս դեպքում առաջին վիպական ակունքներն ավելի հին են և գնում են դարերի խորքերը:

Եթե Նախավետարանը բավական լայն ճանաչում է ունեցել հայ հոդի վրա, ապա նոյնը չի կարելի ասել թուվմայի Ավետարանի Վերաբերյալ: Վերջինիս մի քանի բնագրեր հրատարակեց Կոնստանտին Տիշենդորֆը: Դրանք են. 1. հունական ընդարձակ բնագիրը,

¹⁰ Տե՛ս Ավանդապատում, № 801-ի Գ, Դ, Է, Է զրուցները և համապատասխան ծանոթագրությունները:

¹¹ Տե՛ս Գրիգոր Տղայութեան Քրիստոսի, զլ. ԻՆ՝ Թանգարան հիմն և նոր դպրութեանց, Բ գրքում:

¹² Տե՛ս Սարգիս Հարությունյան, Գրիգոր Նարեկացին հայ ժողովրդական ավանդության մեջ՝ «Բաճ ի խորոց սրտի առ Նարեկացի» գրքում, Երևան, 2003, էջ 214:

¹³ Տե՛ս նոյն հոդվածը:

2. համառոտ-հունականը, 3. ասորականը, որը մեզ է հասել 6-րդ դարի ձեռագրով: Արան մոտ է լատիներեն թարգմանությունը: Կա նաև այդ ավետարանի ազատ մշակումը, պահպանված՝ Կեղծ Մատթեոսի ավետարանը: Ընդարձակ հունարեն բնագիրն ունի 19 գլուխ և ընդգրկում է Հիսուսի 5-12 տարեկան հասակում կատարած հրաշագործությունների պատմությունները, համառոտը՝ 11 գլուխ. Հիսուսի 5-8 տարեկան հասակն ու լատիներենը՝ մինչև Հիսուսի 8 տարեկանը, պարունակում է 15 գլուխ¹⁴:

Որ Թովմայի Ավետարանը կարող էր ոչնչացված լինել Հայաստանում, շատ հավանական է: Նրանում առավել ցայտուն է ի հայտ գալիս մանիքեականների, Անսորեականների և սրբաց հաջորդած աղանդավորականների կողմից որդեգրված զնոստիկյան գաղափարախոսությունը, մասնավորապես Dokerism-ը, այսինքն՝ Քրիստոսի երևութականության և նրա աստվածային բնության վերաբերյալ ուսմունքը, նրա մարմնավորման փաստի ժըստումը: Հիսուսն իր հրաշագործություններով և իմաստությամբ, որոնք արդարայտություն են գտնում արդեն մասուկ հասակում, ապացուցում է, որ ինքը չի պատկանում այս աշխարհին: Նույն բնույթն ունեն Հիսուսի Տղայության նաև այլ Ավետարանները: Սակայն Թովմայի Ավետարանն ունի ևս մի առանձնահատկություն: Այն, ինչպես նկատել են ուսումնասիրողները (Առնող Մեթեր¹⁵, Նիկոլայ Սպերանսկի¹⁶ և այլք), տարբերվում է մնացած բոլորից Հիսուսի կերպարի կերտման եղանակով: Մասուկ Քրիստոսի բնավորությունն աչքի է ընկնում արտակարգ խստությամբ և դաժանությամբ: Օժտված լինելով երկնային ուժով, նա այդ ուժը գործադրում է պատճեռու համար բոլոր նրանց, ովքեր չեն ընդունում նրա աստվածությունը: Հիսուսի այդ նկարագիրը շատ հեռու է կանոնանան և նույնիսկ պարականություն պատկերված Քրիստոսից, և պարզ է, որ չէր կարող լայն տարածում ունենալ:

Սակայն ծանոթությունը Թովմայի Ավետարանի այլ լեզուներով պահպանված բնագրերի հետ ցուց տվեց, որ հայկական զրուցներում թեն շատ սակավ հանդիպում են նաև Թովմայի Ավետարանից հայ բանահյուսություն անցած և տեղանացած ավանդություններ:

Ուշագրավ է Գրիգոր Նարեկացու կողմից աղավնիների կենդանացման մասին գրուցը, որն անցել է նաև նրա վարքի ծերենցյան խմբագրության մեջ: Նույն ավանդությանը հանդիպում ենք Թովմայի Ավետարանի 2-րդ գրուցում, որտեղ մասուկ Հիսուսը կենդանացման է կավածեփ ճճնդուկներին: Քանի որ Նարեկացու կողմից աղավնիների կենդանացման գրուցը շատ հայտնի է, սառիս բերում ենք միայն Թովմայի Ավետարանի 2-րդ գրուցը.

«Երբ Հիսուս մանուկը հինգ տարեկան էր, նա խաղում էր առվակի ծանծաղուտի մոտ և շրափուի մեջ ջուր էր հավաքում: Իր մի խոսքով նա դարձրեց այն զույլ: Եվ փափկացրեց

¹⁴ Տե՛ս Evangelia Apocrypha... edit Constantin Tischendorf. Lipsiae, 1853.

Հունարեն ընդարձակ խմբագրությունը՝ զուգահեռ ասորերեն և լատիներեն տարընթերցումներով, գերմաներեն թարգմանությամբ տե՛ս E. Hennecke, Neu testamentische Apokryphen..., Tübingen und Leipzig, 1904: Ուստերեն լեզվով՝ Եванգелие детства, «Апокрифы древних христиан», Москва, 1989, с. 142.

¹⁵ Տե՛ս Meher A., Erzählung des Thomas` E. Hennecke, Neutestamentliche Apokryphen... գրքում, էջ 66:

¹⁶ Տե՛ս Пыпин А. Н., История русской литературы, т. I, Санкт-Петербург, с. 421.

կավճ ու ծեփեց 12 ճնշողություն: Շաբաթ օր էր, երբ նա դա արեց: Այնտեղ կային շատ երեխաներ, որոնք խաղում էին նրա հետ:

Բայց երբ ինչ-որ երավեցի տեսավ, թե ինչ է անում խաղալով Հիսուսը, նա անմիջապես գնաց նրա հոր՝ Հովսեսի մոտ և ասաց:

-Նայի ի՞, քո որդին ծանծաղուտում է և պղծեց շաբաթ օրը:

Երբ Հովսեսի գնաց այստեղ և տեսավ (Հիսուսին), նա բռավեց.

-Ինչո՞ւ ես անում շաբաթ օրն այն, ինչը չպետք է անես:

Իսկ Հիսուսն ափն ափին խիեց և դիմեց ճնշողուկներին.

-Թուե՞ք:

Եվ ճնշողուկները ճիվալով թուան-գնացին:

Երավեցիները զարմացան՝ տեսնելով այդ, գնացին ու պատմեցին ավագներին, որ տեսան, թե ինչպես Հիսուս կատարեց իր ասածը¹⁷:

Եվ՝ Հիսուս, և՝ Նարեկացին կենդանացնում են թոշումներին: Մեկը ծեփում է ճնշողուկներ հրեաների հանգստյամ՝ շաբաթ օրը, մյուա՛ աղավնիներ է տապակում ուրբաթ՝ հայերի պասի օրը, և ցանկանում հյուրասիրել իրեն այցելույշան եկածներին: Երկուսն էլ անթույլատրելի գործ են անում արգելված ծամանակ: Երկուսն էլ պարսավաճրից հետո ափն ափին են խիում ու կենդանացնում թոշումներին: Դրանով հաստատվում է նրանց սրբությունը և գերբնական զրույթունը:

Այստեղ պարզորոշ կարելի է ասել, որ պարականոնի զրուցը գրեթե անփոփոխ տեղայնացել է և կապվել Գրիգոր Նարեկացու անվան հետ:

Մեկ այլ զրուց, որը նույնպես անցել է Գրիգոր Նարեկացու վարքի խլաթեցիական խմբագրություն, կապված է Նարեկացու գերեզմանի հրաշագործ ուժի հաստատման հետ, որի շնորհիվ կենդանանում է թուխսն իր ճուերով:

Եթե մեր բերված այս զրուցները, հատկապես առաջինը, կարելի է համարել Թովմայի Ավետարանի փոխառության հետևանք, ապա սրանց հետ մեկտեղ պետք է մատնանշենք մի երկու զրուց՝ կապված հենց Քրիստոսի անվան հետ, որոնք իրենց բնույթով համարունչ են պարականոնի զրուցներին: Նրանցում Քրիստոսի կերպարն աչքի է ընկնում նոյն դաժանությամբ և խտությամբ: Դրանք են՝ Ավանդապատումի հմր. 801-ի 8-րդ, ապա 13-րդ, 14-րդ զրուցները: Առաջինում ասված է. «Երբ Քրիստոսն անցնում էր ճանապարհով, բոլորը գնում են նրան տեսնելու, բացի ջուրհակից, որն ասում է. «Այս էլ վերջացնեմ» հետո, այս էլ՝ հետո»: Այսպես շարունակվում է մինչև Քրիստոսի հեռանալը: Հիսուս, տեսնելով, որ ջուրհակը չի եկել, անհծում է նրան՝ ասելով. «Ինչքան աշխատես, կուշտ չուտես»:

Երկրորդ զրուցում Քրիստոսը հանդես է գալիս հարկարանի դերում, նա երեխաներից տասանորդ հարկ է հավաքում: Մի կին, որ տասը երեխա ուներ, մի քանիսին թաքցնում է, որ տասանորդ չվճարի: Քրիստոսը գալիս է այս կնոջ մոտ: Վերջինս ցուց է տալիս իր երեխաներին: Հիսուսը հարցնում է.

-Էլ որդիք չումն ա:

¹⁷ Թարգմանությունը ուսւերենից. «Առօքրիֆք...», էջ 142, զրուց 2: Համեմատել ենք նաև գերմաներեն թարգմանության հետ, մշվ. աշխ. էջ 67:

-Չէ, - պատասխանում է Կիմը:

Քրիստով լուս Բեռանում է: Կիմը գնում, բաց է անում պահարանը, որտեղ թաքցրել էր իր երեխաներին, սակայն ոչ մեկին չի գտնում, բոլորը դարձել են չաշանք (քաջեր՝ գերբնական հոգիներ):

Կա այս զրուցի մի այլ տարրերակ, որը քահանան է ունենում 40 երեխա և 20-ին թաքցնում է:

Այս վերջին զրուցների զուգահեռները չեն հանդիպում Թովմայի Ավետարանում, և չի կարելի պնդել, որ Արանք գալիս են այդ ավետարամից, սակայն վատահորեն կարելի է ասել, որ Արանք նույն միջավայրի և նույն տիպի աղբյուրներից ծնած և տեղայնացած զրուցներ են:

Ամփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ Քրիստոսի Տղայության Ավետարանը, այդ թվում և Թովմայի, որոշակի հետք են թողել հայկական զրուցների և Գրիրոր Նարեկացու մասին հյուաված ավանդությունների վեա: Նրանք ոչ միայն ներշնչման աղբյուր են հանդիսացել կանոնական Ավետարանների՝ Քրիստոսի տղայության պատմության պակասը լրացնելու, այլև ինքնուրույն հայկական զրուցներ ստեղծելու համար: